ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք. Երևան «11» 03 2019թ № 150 Ա

ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի № 1515-Ն որոշման 13-րդ կետի 1-ին ենթակետի «բ.» պարբերությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) Ստանդարտների մշակման ծառայությունների 2019 թվականի ծրագիրը՝ համաձայն № 1 հավելված:

2) Ստանդարտացման 2019 թվականի աշխատանքների ցանկը՝ համաձայն № 2 հավելվածի:

3) Ծախսերի նախահաշիվը՝ համաձայն №3 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի տեղակալ Անահիտ Խեչոյանին՝ ապահովել սույն հրամանի տեղադրումը Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պաշտոնական կայք-էջում:

3. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Գլխավոր քարտուղարին՝ ապահովել «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ստանդարտների մշակման ծառայությունների ձեռք բերման նպատակով մրցույթի կազմակերպումը:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Ա. Բաբայանին:

ՏԻԳՐԱՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Հավելված №1
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի
2019 թվականի 11.03 № 150 հրամանի

2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ
ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման և միջազգային ու ԵԱՏՄ շուկաների հետ ինտեգրման գործընթացում կարևոր է միասնական ներդաշնակ ստանդարտների առկայությունը: Միասնական ներդաշնակ ստանդարտները ոչ միայն խթանում են միջազգային առևտուրը, այլև նպաստում են համաշխարհային լավագույն փորձի ու գիտելիքի տարածմանը, տնտեսության տարբեր ճյուղերում նորագույն տեխնոլոգիաների ներդրմանը, էներգախնայողությանը, շրջակա միջավայրի պահպանությանը, գործարարության զարգացմանը, մարդկանց կյանքի ու առողջության անվտանգության ապահովմանը, երկրի պաշտպանունակության ամրացմանը և այլն:

Հայաստանի ազգային ստանդարտների «Ստանդարտների մշակման ծառայությունների 2019 թվականի ծրագիրը» (այսուհետ՝ Ծրագիր) նախատեսում է մշակել միջազգային և տարածաշրջանային ստանդարտներին ներդաշնակ այնպիսի ազգային ստանդարտներ, որոնք կնպաստեն Հայաստանի Հանրապետության տնտեսության տեխնոլոգիական բազայի արդիականացմանը և նորարարական ենթակառուցվածքի զարգացմանը, ինչպես նաև առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացմանն ու արտահանման ծավալների խթանմանը, ռազմաարդյունաբերության ոլորտում աշխատանքների բարելավմանը:

Ծրագրի մշակման համար հիմք են ծառայել միջազգային և տարածաշրջանային ստանդարտների հետ ազգային ստանդարտների ներդաշնակեցման վերաբերյալ միջազգային և Հայաստանի Հանրապետության մի շարք իրավական ակտերի և Առևտրի համաշխարհային կազմակերպության Առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացման համաձայնագրի պահանջները:

I. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. Ծրագրի մշակման համար հիմք են ծառայել՝

1) «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի փետրվարի 8-ի ՀՕ-21-Ն օրենքը.

2) «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի փետրվարի 8-ի ՀՕ-19-Ն օրենքը.

3) «Հավատարմագրման մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի փետրվարի 8-ի ՀՕ-20-Ն օրենքը.

4) Առևտրի համաշխարհային կազմակերպության 2002 թվականի դեկտեմբերի 10-ի «Առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագրի պահանջները՝

միջազգային և եվրոպական ստանդարտների հետ ազգային ստանդարտների ներդաշնակեցման վերաբերյալ.

5) «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» 2015թ. մարտի 25-ի ՀՕ-16-Ն օրենքը.

6) «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 12-ի ՀՕ-67-Ն օրենքը.

7) «Հայաստանի Հանրապետության նախագահի 2017թ. հունվարի 31-ի «Ռազմարդյունաբերական և ռազմատեխնիկական քաղաքականության ռազմավարությունը հաստատելու մասին» № 15-Ն կարգադրությունը.

8) Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում տվյալների պահոցի ստեղծման ծրագրին, միջոցառումների ժամանակացույցին և պետություն-մասնավոր հատված համագործակցության ձևաչափին հավանություն տալու մասին» № 49 արձանագրային որոշում.

9) Հայաստանի Հանրապետության կառավարության 1993 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության միջոցառումների մասին» № 600 որոշումը.

10) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը հաստատելու մասին» № 836-Ն որոշումը.

11) ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի «ՀՀ կառավարության 2017-2022թթ. ծրագիր» № 646-Ա որոշումը

12) Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի նիստի № 51 արձանագրության 17-րդ կետով հավանության արժանացած՝ գործող քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի՝ եվրոպական նորմերին համապատասխանեցման առաջնահերթ միջոցառումների ծրագիրը.

13) Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» № 426-Ն որոշումը.

14) «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» 2014 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագիրը.

15) «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության 1992թ. դեկտեմբերի 12-ի ՀՕ-43 օրենքը.

16) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1522-Ն որոշումը.

17) Ստանդարտացման ոլորտի շահագրգիռ կողմերի ներկայացված առաջարկությունները:

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2. Ծրագրի նպատակներն են՝

1) նպաստել միջազգային լավագույն փորձի և գիտելիքների տարածմանը.

2) միջազգային և եվրոպական ստանդարտների ներդաշնակեցման միջոցով նպաստել տնտեսության տարբեր ճյուղերում նորագույն տեխնոլոգիաների, նորամուծությունների և լավագույն փորձի ներդրմանը.

3) նպաստել սպառողական շուկայում արտադրանքի անվտանգության ապահովմանը.

4) խթանել հայրենական արտադրանքի որակի և մրցունակության բարձրացումը.

5) ապահովել տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարումը.

6) վերացնել առևտրում առկա տեխնիկական խոչընդոտները.

7) նպաստել ռազմաարդյունաբերության ոլորտում աշխատանքների կարգավորմանը.

8) ապահովել սպառողների շահերի պաշտպանությունը և սպառողական իրազեկության բարձրացումը տեխնիկական կանոնակարգման ենթակա ոլորտներում.

9) Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների ապահովում.

10) Հայաստանի Հանրապետության օրենսդիր և պետական կառավարման մարմիններն ու կազմակերպություններն ապահովել լավագույն փորձի ու գիտելիքի վրա հիմնված նորմատիվատեխնիկական բազայով՝ որոշումների ընդունման գործընթացին աջակցելու և Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման համար կիրառելու նպատակով:

3. Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

1) ազգային ստանդարտների մշակում և կիրառում՝

ա. ռազմաարդյունաբերության համակարգում աշխատանքների կարգավորում և բարելավում.

բ. շենքերի էներգաարդյունավետության բարելավում և էներգախնայողության ապահովում.

գ. տեղեկատվական անվտանգության ապահովում.

դ. շինարարական նյութերի և արտադրանքի որակի և անվտանգության ապահովում.

ե. հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող աջակից սարքավորումների դասակարգում.

զ. շրջակա միջավայրի և անվտանգության պահանջների պահպանում.

է. «Ին վիտրո» ախտորոշման բժշկական սարքավորումներ արտադրողի կողմից տրամադրվող տեղեկատվության սահմանում միջազգային պահանջներին համապատասխան.

ժ. ՀՀ կազմակերպություններում որակի կառավարման համակարգերի ներդրման բարելավում.

ժա. ջրի որակի փորձարկման մեթոդների սահմանում.

2) միջազգային ստանդարտներին ազգային ստանդարտների ներդաշնակեցման մակարդակի բարձրացումը կխթանի՝

ա. նորարարական տեխնոլոգիաների ներդրումը Հայաստանի Հանրապետության տնտեսությունում.

բ. հայրենական արտադրանքի մրցունակության և շահութաբերության բարձրացումը.

գ. չհիմնավորված տեխնիկական խոչընդոտների վերացումը՝ ապահովելով ազատ առևտուր.

3) ստանդարտացման միջազգային, տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցություն՝

ա. Ստանդարտացման միջազգային, տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցությունն ու աշխատանքների կազմակերպման ծրագիրը հնարավորություն են տալիս մասնակցելու Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ԻՍՕ), Ստանդարտացման եվրոպական կոմիտեի (ՍԵՆ) և ԱՊՀ ստանդարտացման միջպետական խորհրդի, ԵԱՏՄ-ի ու դրանց ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին, կիրառելու այդ կազմակերպությունների կողմից ընդունված ստանդարտները, ներկայացնելու նրանց կողմից մշակված ստանդարտների նախագծերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության շահագրգիռ մարմինների և ստանդարտացման ազգային մարմնի առաջարկությունները՝ դրանով նպաստելով հայրենական արտադրողների կողմից արտադրված ու մատուցված ծառայությունների արտահանմանը՝ ինչպես միջազգային, այնպես էլ՝ տարածաշրջանային (Եվրամիության, ԵԱՏՄ և ԱՊՀ երկրներ) շուկաներ: Բացի դրանից, հանդիսանալով միջազգային ստանդարտացման վերը նշված կազմակերպությունների անդամ, ստանդարտացման ազգային մարմինը պարտավոր է մասնակից լինել այդ կազմակերպությունների աշխատանքներին և ակտիվորեն մասնակցել հրավիրվող խորհրդակցություններին ու տարեկան վեհաժողովներին: Այդպիսի մասնակցությունը բարձրացնում է Հայաստանի Հանրապետության հեղինակությունը միջազգային ասպարեզում և ամեն անգամ թույլ է տալիս հիմք դնել տարբեր շահագրգիռ կազմակերպությունների հետ նոր շահավետ համագործակցության.

4) Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքներ՝

ա. Ստանդարտների ազգային ֆոնդի համալրման ու վարման աշխատանքներն ըստ Ծրագրի հնարավորություն են տալիս Հայաստանի Հանրապետությանն ունենալու ազգային ստանդարտների արդիականացված ֆոնդ՝ միջազգային և տարածաշրջանային ստանդարտներին ներդաշնակ.

բ. 2019 թվականին իրականացվելու են ազգային ֆոնդի համալրման միջոցառումներ, որոնց արդյունքում ազգային ֆոնդը կհամալրվի միջազգային (ԻՍՕ), եվրոպական (ԵՆ), միջպետական (ԳՕՍՏ) և ՌԴ (ԳՕՍՏ Ռ) նոր ստանդարտներով՝ այդ կազմակերպությունների ստանդարտների թարմացմանը համարժեք: Այդ նոր ստանդարտները որպես տեղեկատվական ռեսուրս են ծառայում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և շահագրգիռ անձանց համար՝ տնտեսության տարբեր ճյուղերում անհրաժեշտ և պահանջված գիտելիքների, տեխնոլոգիաների, կառավարման լավագույն փորձի, խորհրդատվության և ուղեցույցների կիրառման նպատակով:

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

4. Ծրագրի շրջանակներում աշխատանքներն իրականացվելու են ըստ հետևյալ սկզբունքների՝

1) ազգային ստանդարտների մշակման, ընդունման և կամավոր կիրառման գործընթացում բոլոր շահագրգիռ կողմերի կամավոր ու հավասար մասնակցության իրավունքի պահպանում.

2) շահագրգիռ կողմերի փոխհամաձայնության վրա հիմնված ազգային ստանդարտների մշակում և ընդունում.

3) ստանդարտացման գործընթացի բոլոր փուլերում աշխատանքների թափանցիկություն և պատշաճ մակարդակով հանրային իրազեկում.

4) ստանդարտացման գործընթացում շահագրգիռ կողմերի համընդհանուր շահերի նկատմամբ որևէ անձնական շահի գերիշխման կանխարգելում.

5) ազգային ստանդարտների համապատասխանություն միմյանց և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը.

6) գիտության և տեխնոլոգիայի համաշխարհային նորարարական, առաջադիմական նվաճումների միջազգային (այդ թվում՝ եվրոպական) ստանդարտացման կանոններն ու արդյունքները հաշվի առնելը.

7) միջազգային և տարածաշրջանային ստանդարտներին ներդաշնակ ազգային ստանդարտների մշակում՝ հաշվի առնելով աշխարհագրական, կլիմայական և հիմնարար տեխնոլոգիական բնույթի տարբերությունների առկայությունը.

8) գործողության մեջ դրված ազգային ստանդարտների և դրանց փոփոխությունների պատշաճ ծանուցում բոլոր շահագրգիռ կողմերին.

9) ստանդարտացման աշխատանքների իրականացում՝ տեխնիկական հանձնաժողովների և աշխատանքային խմբերի միջոցով:

IV. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

5. Ծրագիրը ձևավորվել է ստանդարտացման ոլորտի շահագրգիռ բոլոր կողմերի առաջարկությունների հիման վրա: Այն նաև մեծապես հիմնված է ՀՀ կառավարության կողմից հռչակված տնտեսական գերակայությունների, տնտեսական քաղաքականության, սահմանված պետական ծրագրերի իրականացման և միջազգային համաձայնագրերով ստանձնած ՀՀ պարտավորություններից բխող պահանջների վրա.

6. Ծրագրով նախատեսվում է մշակել ազգային ստանդարտների նախագծեր՝ տնտեսության և արդյունաբերության հետևյալ ոլորտների համար.

1) **<u>Ռազմաարդյունաբերություն</u>**. ռազմաարդյունաբերության ոլորտի աշխատանքները կարգավորելու նպատակով Ծրագրով նախատեսված է մշակել ռազմական տեխնիկայի արտադրատեսակների շահագործման ընթացքում հեղինակային վերահսկողության, տեխնիկական վերահսկողության, ենթանախագծերի և փորձակոնստրուկտորական աշխատանքների հաշվետու գիտատեխնիկական փաստաթղթերի ստանդարտներ, որոնց ներդրման և կիրառման արդյունքում կսահմանվեն ռազմական տեխնիկայի արտադրատեսակների և նյութերի վերահսկողությանը, փաստաթղթերի մշակման հետ կապված գիտահետազոտական աշխատանքներին ներկայացվող պահանջներ, ծրագրային փաստաթղթերի միասնական համակարգի պահանջներ, կոնստրուկտորական փաստաթղթերի միասնական համակարգի պահանջներ, ինչպես նաև տեխնոլոգիական փաստաթղթերի միասնական համակարգի պահանջներ:

2) **<u>Էներգետիկա</u>**. էներգետիկայի ոլորտում նախատեսվում է մշակել արևային ջերմային տեղակայանքներին և դրանց բաղադրիչներին ներկայացվող պահանջներ սահմանող ստանդարտ:

3) **<u>Շինարարություն</u>**. քաղաքաշինության ոլորտում նախատեսվում է մշակել օդափոխվող տարածքների տանիքների համար հանքային բամբակից ներքնակներին ներկայացվող պահանջներ սահմանող ստանդարտներ՝ միջազգային պահանջներին համապատասխան, որոնք ուղղված են ջերմամեկուսացման ապահովմանը: Նշված ոլորտում նախատեսվում է նաև մշակել ստանդարտ, որով սահմանում են ցեմենտի փորձարկման մեթոդներ՝ միջազգային պահանջներին ներդաշնակ:

4) **<u>Տեղեկատվական տեխնոլոգիաներ</u>**. տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգության ոլորտում նախատեսվում է արդի միջազգային ստանդարտին համապատասխան մշակել տվյալների մշակման կենտրոնների արտադրողականության հիմնական ցուցանիշների համալիր հետազոտության մեթոդաբանության ղեկավար ցուցումներ:

5) **<u>Կառավարման համակարգեր.</u>** տվյալ ոլորտում մշակվող ստանդարտները կսահմանվեն համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրում

իրականացնող մարմիններին, սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգերին, սննդամթերքի արտադրության շղթայում ընդգրկված կազմակերպություններին ներկայացվող պահանջներ, մասնագիտական առողջության և անվտանգության կառավարման համակարգերի կանոնակարգմանը ներկայացվող պահանջներ:

6) **Առողջապահություն**. առողջապահության ոլորտում նախատեսվում է մշակել ստանդարտներ, որոնցով կսահմանվի «Ին վիտրո» ախտորոշման բժշկական սարքավորումներ արտադրողի կողմից տրամադրվող տեղեկատվությունը, մասնավորապես պիտակավորումը՝ միջազգային պահանջներին համապատասխան:

7) **Սննդամթերքի արտադրություն**. Ծրագրով նախատեսված է ցորենի ալյուրից հացի ընդհանուր տեխնիկական պայմաններ սահմանող ստանդարտի վերանայում, ինչը կապահովի տվյալ ոլորտի պահանջների արդիականացումը:

8) **Սոցիալական ապահովություն**. Ծրագրով նախատեսվում է մշակել հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող աջակից սարքավորումների դասակարգման վերաբերյալ ստանդարտ՝ միջազգային արդի պահանջներին համապատասխան:

9) **Բնապահպանություն**. Ծրագրով նախատեսվում է մշակել շրջակա միջավայրի պահպանման և անվտանգության պահանջներին համապատասխան սառեցնող համակարգերի և ջերմային պոմպերի տեղակայման պահանջներ սահմանող ստանդարտներ՝ միջազգային պահանջներին ներդաշնակ:

10) **Մանրէաբանություն**. Նշված ոլորտում նախատեսվում է մշակել սննդամթերքի և անասնակերի մանրէաբանության բնագավառում պաթոգեն միկրոօրգանիզմների որոշման համար պոլիմերազային շղթայական ռեակցիայի (PCR) մեթոդ սահմանող ստանդարտներ՝ միջազգային պահանջներին ներդաշնակ:

11) **Ջրի որակ**. Նշված ոլորտում նախատեսվում է մշակել ջրի մեջ սնդիկի պարունակության որոշում փորձարկման մեթոդ սահմանող ստանդարտ՝ միջազգային արդիական պահանջներին համապատասխան: Նախատեսվում է մշակել նաև ջրում լուծված մի շարք կատիոնների պարունակության որոշման իոնային քրոմատագրման մեթոդ: Այդ ստանդարտների մշակումը ապահովում է փորձարկման մեթոդի արդիականացում, արդյունքների հավաստիության և ճշգրտության բարձրացում միջազգային պահանջներին ներդաշնակ:

12) **Ստանդարտացման հիմնադրութային ստանդարտների մշակում**. Ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտների արդիականացումն ապահովելու նպատակով նախատեսվում է վերանայել կազմակերպության ստանդարտների հիմնական դրույթներ սահմանող ստանդարտ:

7. Միջազգային ու տարածաշրջանային ստանդարտացման համագործակցության ընդլայնումը.

1) Ստանդարտացման ազգային մարմինը 1997 թվականից Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ԻՍՕ) լիիրավ և 2007 թվականից Ստանդարտացման եվրոպական կոմիտեի (ՍԵՆ) գործընկեր և 2008 թվականից՝ միացող անդամ է: Մասնակցում է Ստանդարտացման միջազգային կազմակերպության 60 տեխնիկական հանձնաժողովի ու ենթահանձնաժողովի և 3 քաղաքականության մշակման հանձնաժողովի, Ստանդարտացման եվրոպական կոմիտեի 3 հանձնաժողովի աշխատանքներին: Միջազգային ու եվրոպական ստանդարտների նախագծերի քննարկման կարևորագույն փուլերում ստանդարտացման ազգային մարմնի համապատասխան մասնագետների մասնակցությունն ակտիվացնելու նպատակով անհրաժեշտ է նշված հեղինակավոր կազմակերպությունների ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների մասնակցության ընդլայնում: Հաշվի առնելով երկրի տնտեսության զարգացման գերակա ուղղությունները՝ անհրաժեշտ է ակտիվացնել միջազգային ստանդարտացման աշխատանքները տնտեսության այդ ոլորտներն ընդգրկող տեխնիկական հանձնաժողովներում: Տվյալ տեխնիկական հանձնաժողովներում աշխատանքների ակտիվացումը կնպաստի միջազգային և եվրոպական ստանդարտների նախագծերի վերաբերյալ մասնագիտական կարծիքի ձևավորմանը, Հայաստանի Հանրապետությունում դրանց կիրառման անհրաժեշտության հիմնավորմանը: Միջազգային ու եվրոպական ստանդարտների ընդունման գործընթացում ստանդարտների քննարկման և ընդունման շղթան ամբողջական դարձնելու նկատառումով նախատեսվում է Հայաստանի Հանրապետությունում ստեղծել համանման տեխնիկական հանձնաժողովներ: Վերոգրյալ ստանդարտացման հանձնաժողովների կազմում իրենց համաձայնությամբ կընդգրկվեն պետական կառավարման, գիտական ինստիտուտների, հասարակական կազմակերպությունների, արտադրական կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնք կաշխատեն միջազգային ու եվրոպական ստանդարտների նախագծերի փորձաքննության և հանձնաժողովներում դրանց կիրառման հնարավորությունների գնահատման ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում, կմշակվեն այդ ստանդարտներին ներդաշնակ ազգային ստանդարտներ:

2) Հայաստանի Հանրապետությունը 2015 թ. հունվարի 1-ից անդամակցում է Եվրասիական տնտեսական միությանը, իսկ ստանդարտացման ազգային մարմին ընդգրկվել է այդ կառույցի տարբեր աշխատանքային խմբերում՝ որպես ստանդարտացման ազգային մարմին: Ելնելով վերոնշյալից՝ նախատեսվում է ակտիվացնել Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջպետական ստանդարտացման աշխատանքներում: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում ստանդարտացման ոլորտի մասնագետների մասնակցությունը ԱՊՀ ՍՉՍ ՄՊԽ Ստանդարտացման գիտատեխնիկական հանձնաժողովի և ԵԱՏՄ տարբեր ենթահանձնաժողովների նիստերին: Համագործակցության սերտացման արդյունքում հնարավոր կլինի ՀՀ-ում գործողության մեջ դնել և կիրառել Մաքսային միության շուրջ 47 տեխնիկական կանոնակարգերի պահանջներն ապահովող ստանդարտները:

Առաջին և երկրորդ ենթակետերում նշված աշխատանքների ամբողջական կատարումը պահանջում է հավելյալ ֆինանսական ռեսուրսների ընդգրկում, որը չի ապահովվում Ծրագրի ֆինանսավորման շրջանակներում:

3) Միջազգային (ԻՍՕ) և միջպետական (ԳՕՍՏ) ստանդարտների նախագծերի փորձաքննություն

– Ազգային ստանդարտացման հանձնաժողովներում պետք է կատարվի միջազգային և միջպետական ստանդարտների նախագծերի վերաբերյալ մասնագիտական կարծիքի ձևավորում և փորձաքննություն:

4) Միջազգային և միջպետական ստանդարտների նախագծերի էլեկտրոնային քվեարկություն

– Հայաստանի Հանրապետությունում տնտեսության գերակա ուղղությունների զարգացմանը նպաստող որոշակի ոլորտների միջազգային և միջպետական ստանդարտների նախագծերի էլեկտրոնային քվեարկություն՝ հետագայում դրանք ՀՀ-ում ներդնելու հեռահար նպատակով:

8. Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքների կատարելագործում.

1) Ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման համար Ծրագրով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

ա. ազգային ֆոնդի համալրման, հաշվառման ու վարման աշխատանքների կազմակերպում և իրականացում.

բ. ստանդարտների էլեկտրոնային տվյալների բազայի վարում՝ «Ստանդարտ» տեղեկատվական որոնման ավտոմատացված համակարգի միջոցով.

գ. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններին և կազմակերպություններին ստանդարտների և տեղեկատվության տրամադրման աշխատանքների կազմակերպում.

դ. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ստանդարտների ամբողջ տեքստի տվյալների բազայի (էլեկտրոնային տարբերակի) ստեղծման, հաշվառման և պահման աշխատանքների կազմակերպում.

ե. ստանդարտների տվյալների հիմնապաշարից սպառողների (օգտագործողների) օգտվելու հնարավորության և համացանցի միջոցով ստանդարտների էլեկտրոնային վաճառքի մեխանիզմների ներդրում.

զ. Ստանդարտացման միջազգային կազմակերպության, Ստանդարտացման եվրոպական կոմիտեի, ԵԱՏՄ-ի և ԱՊՀ Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման Միջպետական խորհրդի շրջանակներում գործող տեղեկատվական համակարգերի ինտեգրման աշխատանքների զարգացում (ստանդարտների էլեկտրոնային տարբերակների ստացում, շահագրգիռ կողմերի ապահովում, էլեկտրոնային քվեարկություն և այլն).

է. Առևտրի համաշխարհային կազմակերպության առևտրում տեխնիկական խոչընդոտների հարցման կետի աշխատանքների իրականացում՝ ըստ պահանջի:

V. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

9. Ստանդարտների մշակման ծառայությունները ֆինանսավորվում են համաձայն «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի:

10. Ծրագիրը իրականացվում է ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի ֆինանսավորմամբ՝ 14.123.4 հազ. դրամ, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

Հավելված N 2
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2019 թվականի
11 03 N 150 հրամանի

Ց Ա Ն Կ

ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Հ/Հ	Մշակման ենթակա ստանդարտների և աշխատանքների անվանումները	Նպատակը	Կատարող կազմակերպություն	Արդյունքը	Կատարման ժամկետը	2019 թվականի ֆինանսավորում (հազ. Դրամ)
1	2	3	4	5	6	7
			1. Ռազմաարդյունաբերություն			
1.1	Արտադրանքի մշակման և արտադրության կազմակերպման համակարգ. Ռազմական տեխնիկա. Գիտահետազոտական աշխատանքներին, ենթանախագծերին և փորձակոնստրուկտորական աշխատանքներին վերաբերող գիտատեխնիկական հաշվետու փաստաթղթեր. Հիմնական դրույթներ ՀՍՏ Ռ ռազմական ազգային ստանդարտի մշակում	Ռազմաարդյունաբերության աշխատանքները համակարգող նորմատիվ փաստաթղթերի ստեղծում	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
1.2	Արտադրանքի մշակման և արտադրության կազմակերպման համակարգ. Ռազմական տեխնիկա. Արդյունաբերական կազմակերպությունների տեխնիկական վերահսկողությունը արտադրատեսակի շահագործման ընթացքում ՀՍՏ Ռ ռազմական ազգային ստանդարտի մշակում	Ռազմաարդյունաբերության աշխատանքները համակարգող նորմատիվ փաստաթղթերի ստեղծում	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
1.3	Արտադրանքի մշակման և արտադրության կազմակերպման համակարգ. Ռազմական տեխնիկա. Արտադրատեսակի շահագործման ընթացքում հեղինակային վերահսկողություն.	Ռազմաարդյունաբերության աշխատանքները համակարգող նորմատիվ փաստաթղթերի ստեղծում	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ

1	2	3	4	5	6	7
	Հիմնական դրույթներ ՀՍՏ Ռ ռազմական ազգային ստանդարտի մշակում					
1.4	Ծրագրային փաստաթղթերի միասնական համակարգ. Ծրագրերի և ծրագրային փաստաթղթերի տեսակներ ՀՍՏ Ռ ռազմական ազգային ստանդարտի մշակում	Ռազմաարդյունաբերության աշխատանքները համակարգող նորմատիվ փաստաթղթերի ստեղծում	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
1.5	Ծրագրային փաստաթղթերի միասնական համակարգ. Ծրագրային փաստաթղթերին ներկայացվող ընդհանուր պահանջներ ՀՍՏ Ռ ռազմական ազգային ստանդարտի մշակում	Ռազմաարդյունաբերության աշխատանքները համակարգող նորմատիվ փաստաթղթերի ստեղծում	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
1.6	Տեխնոլոգիական փաստաթղթերի միասնական համակարգ. Ընդհանուր նշանակության փաստաթղթի ձևավորման ձևեր և կանոններ ՀՍՏ Ռ ռազմական ազգային ստանդարտի մշակում	Ռազմաարդյունաբերության աշխատանքները համակարգող նորմատիվ փաստաթղթերի ստեղծում	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
1.7	Կոնստրուկտորական փաստաթղթերի միասնական համակարգ Պահման և հաշվառման կանոններ ՀՍՏ Ռ ռազմական ազգային ստանդարտի մշակում	Ռազմաարդյունաբերության աշխատանքները համակարգող նորմատիվ փաստաթղթերի ստեղծում	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
1.8	Տեխնոլոգիական փաստաթղթերի միասնական համակարգ. Եզակի տեխնոլոգիական պրոցեսներին վերաբերող փաստաթղթերի լրակազմերի ձևավորմանը և լրակազմությանը ներկայացվող պահանջները ՀՍՏ Ռ ռազմական ազգային ստանդարտի մշակում	Ռազմաարդյունաբերության աշխատանքները համակարգող նորմատիվ փաստաթղթերի ստեղծում	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
		2. Էներգետիկա				
2.1	Տեղակայանքներ արևային ջերմային և դրանց բաղադրիչները. Արևային կոլեկտորներ. Մաս	Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի	Մրցույթով ընտրված	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով

1	2	3	4	5	6	7
	1. Ընդհանուր պահանջներ Ազգային ստանդարտի մշակում ԵՆ 12975-1:2006 ստանդարտին ներդաշնակ	ազգային ծրագրի «Էներգախնայողության գործողությունների ծրագրի» կատարման ապահովում	կազմակերպություն			չարգելված այլ միջոցներ
3. Շինարարություն						
3.1	Ջերմամեկուսացում. Հանքային բամբակից ներքնակներ օդափոխվող ձեղնահարկերի համար. Մաս 1. Տեխնիկական պայմաններ սահմանափակ օդափոխության դեպքում կիրառությունների համար Ազգային ստանդարտի մշակում ԻՍՕ 8144-1:1995 ստանդարտին ներդաշնակ	Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 10-ի «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N 426-Ն որոշման կատարման ապահովում	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
3.2	Ջերմամեկուսացում. Հանքային բամբակից ներքնակներ օդափոխվող ձեղնահարկերի համար. Մաս 2. Տեխնիկական պայմաններ անսահմանափակ օդափոխության դեպքում հորիզոնական դիրքում կիրառությունների համար Ազգային ստանդարտի մշակում ԻՍՕ 8144-2:1995 ստանդարտին ներդաշնակ	Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 10-ի «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» № 426-Ն որոշման կատարման ապահովում	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
3.3	Ցեմենտ. Փորձարկման մեթոդներ. Մաս 1. Խոնավ քիմիայի կիրառմամբ վերլուծություն Ազգային ստանդարտի մշակում ԻՍՕ 29581-1:2009 ստանդարտին ներդաշնակ	Փորձարկման մեթոդի արդիականացում, արդյունքների հավաստիության և ճշգրտության բարձրացում միջազգային պահանջներին ներդաշնակ	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
4. Տեղեկատվական տեխնոլոգիաներ						

1	2	3	4	5	6	7
4.1	Տեղեկատվական տեխնոլոգիաներ. Տվյալների մշակման կենտրոններ. Տվյալների մշակման կենտրոնների արտադրողականության հիմնական ցուցանիշների համալիր հետազոտության մեթոդաբանության ղեկավար ցուցումներ Ազգային ստանդարտի մշակում ԻՍՕ/ԻԷԿ ՏՌ 20913:2016 ստանդարտին ներդաշնակ	ՀՀ տարածքում տվյալների պահոցի ստեղծման ծրագրի պահանջների կիրառման ապահովում	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
5. Կառավարման համակարգեր						
5.1	Սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգեր. Սննդամթերքի արտադրության շղթայում ընդգրկված կազմակերպություններին ներկայացվող պահանջներ ՀՍՏ ԻՍՕ 22000-2006 ազգային ստանդարտի վերանայում	ՀՀ-ում համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման ապահովում	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
5.2	Մասնագիտական առողջության և անվտանգության կառավարման համակարգեր. Պահանջներ և կիրառման ցուցումներ Ազգային ստանդարտի մշակում ԻՍՕ 45001:2018 ստանդարտին ներդաշնակ	ՀՀ-ում համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման ապահովում	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
6. Առողջապահություն						
6.1	«Ին վիտրո» ախտորոշման բժշկական սարքավորումներ. Արտադրողի կողմից տրամադրվող տեղեկատվություն (պիտակավորում). Մաս 1. Տերմիններ, սահմանումներ և ընդհանուր պահանջներ Ազգային ստանդարտի մշակում ԻՍՕ 18113-1:2009 ստանդարտին ներդաշնակ	«Ին վիտրո» ախտորոշման բժշկական սարքավորումներ արտադրողի կողմից տրամադրվող տեղեկատվության սահմանում միջազգային պահանջներին համապատասխան	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ

1	2	3	4	5	6	7
6.2	«Ին վիտրո» ախտորոշման բժշկական սարքավորումներ. Արտադրողի կողմից տրամադրվող տեղեկատվություն (պիտակավորում). Մաս 2. «Ին վիտրո» ախտորոշման ռեակտիվներ մասնագիտական օգտագործման համար Ազգային ստանդարտի մշակում ԻՍՕ 18113-2:2009 ստանդարտին ներդաշնակ	«Ին վիտրո» ախտորոշման բժշկական սարքավորումներ արտադրողի կողմից տրամադրվող տեղեկատվության սահմանում միջազգային պահանջներին համապատասխան	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
6.3	«Ին վիտրո» ախտորոշման բժշկական սարքավորումներ. Արտադրողի կողմից տրամադրվող տեղեկատվություն (պիտակավորում). Մաս 3. «Ին վիտրո» ախտորոշման գործիքներ մասնագիտական օգտագործման համար Ազգային ստանդարտի մշակում ԻՍՕ 18113-3:2009 ստանդարտին ներդաշնակ	«Ին վիտրո» ախտորոշման բժշկական սարքավորումներ արտադրողի կողմից տրամադրվող տեղեկատվության սահմանում միջազգային պահանջներին համապատասխան	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
6.4	«Ին վիտրո» ախտորոշման բժշկական սարքավորումներ. Արտադրողի կողմից տրամադրվող տեղեկատվություն (պիտակավորում). Մաս 4. «Ին վիտրո» ախտորոշման ռեակտիվներ ինքնահսկողության համար Ազգային ստանդարտի մշակում ԻՍՕ 18113-4:2009 ստանդարտին ներդաշնակ	«Ին վիտրո» ախտորոշման բժշկական սարքավորումներ արտադրողի կողմից տրամադրվող տեղեկատվության սահմանում միջազգային պահանջներին համապատասխան	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
6.5	«Ին վիտրո» ախտորոշման բժշկական սարքավորումներ. Արտադրողի կողմից տրամադրվող տեղեկատվություն (պիտակավորում). Մաս 5. «Ին վիտրո» ախտորոշման գործիքներ ինքնահսկողության համար Ազգային ստանդարտի մշակում ԻՍՕ 18113-5:2009 ստանդարտին ներդաշնակ	«Ին վիտրո» ախտորոշման բժշկական սարքավորումներ արտադրողի կողմից տրամադրվող տեղեկատվության սահմանում միջազգային պահանջներին համապատասխան	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
7. Սննդամթերքի արտադրություն						
7.1	Հաց ցորենի ալյուրից. Ընդհանուր տեխնիկական պայմաններ ՀՍՏ 31-99 ազգային ստանդարտի վերանայում	Ցորենի ալյուրից հացի ընդհանուր տեխնիկական պայմանների արդիականացում	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ

1	2	3	4	5	6	7
			8. Սոցիալական ապահովություն			
8.1	Հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող օժանդակող արտադրանք. Դասակարգում և տերմինաբանություն Ազգային ստանդարտի մշակում ԻՍՕ 9999:2016 ստանդարտին ներդաշնակ	Հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող աջակից սարքավորումների դասակարգում արդի պահանջներին համապատասխան	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
			9. Բնապահպանություն			
9.1	Սառեցման համակարգեր և ջերմային պոմպեր. Անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության պահանջներ. Մաս 3. Սարքավորումների տեղակայում և անձնակազմի պաշտպանություն Ազգային ստանդարտի մշակում ԳՕՍՏ ԵՆ 378-3-2014 ստանդարտին ներդաշնակ	Սառեցնող համակարգերի և ջերմային պոմպերի տեղակայման պահանջների սահմանում շրջակա միջավայրի պահպանման և անվտանգության պահանջներին համապատասխան	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
9.2	Սառեցման համակարգեր և ջերմային պոմպեր. Անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության պահանջներ. Մաս 4. Շահագործում, տեխնիկական սպասարկում. նորոգում և վերականգնում Ազգային ստանդարտի մշակում ԳՕՍՏ ԵՆ 378-4-2014 ստանդարտին ներդաշնակ	Սառեցնող համակարգերի և ջերմային պոմպերի տեղակայման պահանջների սահմանում շրջակա միջավայրի պահպանման և անվտանգության պահանջներին համապատասխան	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
			10. Մանրէաբանություն			
10.1	Սննդամթերքի և անասնակերի մանրէաբանություն. Պաթոգեն միկրոօրգանիզմների որոշման համար պոլիմերազային շղթայական ռեակցիայի (PCR) մեթոդ. Ամպլիֆիկատորների արտադրողականության փորձարկում Ազգային ստանդարտի մշակում ԻՍՕ/ՏՍ 20836:2005 ստանդարտին ներդաշնակ	Փորձարկման մեթոդի արդիականացում, արդյունքների հավաստիության և ճշգրտության բարձրացում միջազգային պահանջներին ներդաշնակ	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
10.2	Սննդի շղթայի մանրէաբանություն. Մակերեսից նմուշառման հորիզոնական մեթոդներ Ազգային ստանդարտի մշակում ԻՍՕ 18593:2018 ստանդարտին ներդաշնակ	Նմուշառման մեթոդի արդիականացում, արդյունքների հավաստիության և ճշգրտության բարձրացում միջազգային պահանջներին ներդաշնակ	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ

1	2	3	4	5	6	7
10.3	Սննդամթերքի և անասնակերի մանրէաբանություն. Մանրէաբանական հետազոտության համար փորձանմուշների, սկզբնական կախույթի և տասնապատիկ նոսրացումների պատրաստում. Մաս 1. Սկզբնական կախույթի և տասնապատիկ նոսրացումների պատրաստման ընդհանուր կանոններ ՀՍՏ ԻՍՕ 6887-1-2009 ազգային ստանդարտի վերանայում	Սննդամթերքի և անասնակերի մանրէաբանական հետազոտության համար փորձանմուշների, սկզբնական կախույթի և տասնապատիկ նոսրացումների պատրաստման ընդհանուր կանոնների արդիականացում	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
11. Ջրի որակ						
11.1	Ջրի որակ. Սնդիկի պարունակության որոշում. Ատոմաաբսորբման սպեկտրաչափման կիրառմամբ մեթոդ հարստացմամբ կամ առանց դրա Ազգային ստանդարտի մշակում ԻՍՕ 12846:2012 ստանդարտին ներդաշնակ	Փորձարկման մեթոդի արդիականացում, արդյունքների հավաստիության և ճշգրտության բարձրացում միջազգային պահանջներին ներդաշնակ	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
11.2	Ջրի որակ. Լուծված Li+, Na+, NH4+, K+, Mn2+, Ca2+, Mg2+, Sr2+ և Ba2+ կատիոնների պարունակության որոշում իոնային քրոմատագրման կիրառմամբ. Խմելու ջրի և կեղտաջրերի փորձարկման մեթոդ Ազգային ստանդարտի մշակում ԻՍՕ 14911:1998 ստանդարտին ներդաշնակ	Փորձարկման մեթոդի արդիականացում, արդյունքների հավաստիության և ճշգրտության բարձրացում միջազգային պահանջներին ներդաշնակ	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
12. Ստանդարտացման հիմնադրութային ստանդարտների մշակում						
12.1	Ստանդարտացման ազգային համակարգ. Կազմակերպության ստանդարտներ. Հիմնական դրույթներ ՀՍՏ 1.4-2001 ազգային ստանդարտի վերանայում	Ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտների արդիականացում	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
2. Միջպետական և միջազգային ստանդարտացման	**2. Միջազգային, եվրոպական ու միջպետական ստանդարտացման աշխատանքների կազմակերպում**	Հայրենական արտադրանքի մրցունակության և որակի բարձրացում	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ԱՊՀ ստանդար-տացման միջպետական	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ

1	2	3	4	5	6	7
աշխատանքներ	2.1. ԱՊՀ երկրների ստանդարտացման միջպետական խորհրդի, ստանդարտացման միջազգային կազմակերպության (ԻՍՕ) և Ստանդարտացման եվրոպական կոմիտեի (ՍԵՆ), Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) աշխատանքների կազմակերպում	Տեխնիկական խոչընդոտների նվազեցում միջազգային, եվրոպական, ԱՊՀ և Մաքսային միության երկրների շուկաներում		խորհրդի որոշում, ԻՍՕ և ՍԵՆ վեհաժողով		միջոցներ
	2.2. Միջազգային և միջպետական ստանդարտների նախագծերի էլեկտրոնային քվեարկություն		Մրցույթով ընտրված կազմակերպություն	քվեարկության թերթիկներ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
	2.3. Միջազգային (ԻՍՕ), եվրոպական (ԵՆ) և միջպետական (ԳՕՍՏ) ստանդարտների նախագծերի փորձաքննություն		Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտների նախագիծ	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
3.Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքներ	3.1. **Ստանդարտացման ազգային ֆոնդի վարում** 3.1.1. Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ֆոնդի համալրում և հաշվառում 3.1.2. Ընդունված ազգային ստանդարտների գրանցում 3.1.3. Հայաստանի Հանրապետությունում գործող ազգային ստանդարտների ֆոնդի վարում	Ազգային Ֆոնդի արդիականացում. Պատշաճ և հավաստի տեղեկատվության տրամադրում ստանդարտացման բնագավառում ՀՀ կազմակերպություններին և գործարարներին	Մրցույթով ընտրված կազմակերպություն	ստանդարտների ազգային ֆոնդի արդիականացում և վարում	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
	3.2. **Տեղեկատվական սպասարկման աշխատանքների կազմակերպում** 3.2.1. Հայաստանի Հանրապետության կազմակերպությունների տեղեկա-տվական սպասարկում 3.2.2. «Ստանդարտ» տեղեկատվական-որոնման		Մրցույթով ընտրված կազմակերպություն	տեղեկատվական սպասարկում	2019 թվականի ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ

1	2	3	4	5	6	7
	ավտոմատացման համակարգի ներդրում 3.2.3. Հայաստանի Հանրապետությունում գործող ստանդարտների ամբողջ տեքստի տվյալների բազայի (էլեկտրոնային տարբերակների) ստեղծում, հաշվառում և պահում 3.2.4. ԱՀԿ անդամ երկրների տեղեկատվական (հարցման) կենտրոններին համապատասխան հարցումների տրամադրում 3.2.5. Ազգային ստանդարտների կատալոգի, եռամսյակային տեղեկատուի նախապատրաստում և հրատարակում					
Ընդամենը (այդ թվում՝ ԱԱՀ-ն)					***14123.4***	

Հավելված № 3
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2019 թվականի
11 03 N 150Ա հրամանի

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ստանդարտների մշակման ծառայություններ» ծրագրի կատարման գծով 2019թ. համար

հ/հ/	ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չափի միավորը	Քանակը	Շահառուների թիվը	Միավորի գինը	Ընդամենը /հազ. դրամ/
1.	**Ազգային ստանդարտների մշակման ծրագիր**			**Շահագրգիռ կողմեր**		**10211.8**
1.1	Աշխատավարձ*					8400.0
1.1.1	Բաժնի պետ	ամիս-մարդ	12	1	180	2160.0
1.1.2	Մասնագետ	ամիս-մարդ	12	4	130	6240.0
1.2	Նյութեր**					109.8
1.2.1	Թուղթ	տուփ	48		1.6	76.8
1.2.2	Քարթրիջի լիցքավորում	հատ	11		3	33.0
1.3	Ա.Ա.Հ.					1702.0
2.	**Միջազգային, եվրոպական և միջպետական ստանդարտացման կազմակերպությունների հետ համագործակցության և աշխատանքների կազմակերպման ծրագիր**			**Շահագրգիռ կողմեր**		**1941.6**
2.1	Աշխատավարձ					1560.0
2.1.1	Մասնագետ	ամիս-մարդ	12	1	130	1560.0
2.2	Նյութեր					58.0
2.2.1	Թուղթ	տուփ	25		1.6	40.0

2.2.2	Քարթրիջի լիցքավորում	հատ	6		3	18.0
2.3	Ա.Ա.Հ.					323.6
3.	**Ստանդարտացման ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման ծրագիր**			**Շահագրգիռ կողմեր**		**1970.0**
3.1	Աշխատավարձ					1560.0
3.1.1	Մասնագետ	ամիս-մարդ	12	1	130	1560.0
3.2	Նյութեր					81.8
3.2.1	Թուղթ	տուփ	38		1.6	60.8
3.2.2	Քարթրիջի լիցքավորում	հատ	7		3	21.0
3.3	Ա.Ա.Հ.					328.2
	ԸՆԴԱՄԵՆԸ					**14.123.4**

*Հաստիքների քանակը սահմանվում է համաձայն ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018 թվականի օգոստոսի 1-ի № 612-Ա հրամանով հաստատված հաստիքացուցակի: